

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

(վերահաստատված)

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



## Կանոնակարգ Հայկական բժշկական ինստիտուտի Գիտական խորհրդի

### 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 ՀԲԻ-ի գիտական խորհրդի կանոնակարգը մշակված է համաձայն ՀՀ կրթության ոլորտի օրենսդրական փաստաթղթերի բուհ-ի գիտական խորհրդի կանոնակարգերի տիպային օրինակով:
- 1.2 Գիտական խորհուրդը ընտրովի ներկայացուցչական մարմին է:
- 1.3 Գիտական խորհուրդը իրականացնում է իր գործունեությունը ինստիտուտի ղեկավարության հրամաններով, սույն կանոնադրությամբ
- 1.4 Գիտական խորհրդի որոշումները իրականացվում են ինստիտուտի ռեկտորի հրամանների և կարգադրությունների միջոցով:
- 1.5 Գիտական խորհրդի նախագահ է հանդիսանում ինստիտուտի ռեկտորը
- 1.6 Գիտական խորհրդի քարտուղարը ընտրվում է գիտական խորհրդի նիստում 5 տարի ժամկետով
- 1.7 Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

### 2. Գիտական խորհրդի կառուցվածքն ու գործունեությունը:

- 2.1 Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, կրթության որակի ապահովման բաժնի ղեկավարը, ֆակուլտետների ղեկանները, գիտական քարտուղարը, գրադարանի ղեկավարը, հիմնադիր խորհրդի ներկայացուցիչը, պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչները, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի անդամները և այլոք: Խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել կոլեկտիվի անդամների 25%-ը: Գիտական խորհրդի կազմի 10%-ը՝ ուսանողներ են:

- 2.2 Խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Խորհրդի որոշումները ընդունվում են մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 2.3 Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան 5 անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ռեկտորի կամ խորհրդի անդամների առնվազն 1/3 առաջարկությամբ:
- 2.4 Գիտական խորհրդի հիմնական խնդիրներն են իրականացնել ինստիտուտի մեթոդական ղեկավարումը՝
  - Ուսումնական աշխատանքների
  - Ուսումնամեթոդական աշխատանքների
  - Ուսումնադաստիրակչական աշխատանքների
  - Գիտահետազոտական աշխատանքների
  - Կազմակերպամեթոդական աշխատանքների
  - Կադրային և ադմինիստրատիվ աշխատանքների
- 2.5 Գիտական խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը:
- 2.6 Դիմորդների ընդունելության կանոնները, շրջանավարտներ որակավորման պայմանները
- 2.7 Հաստատում է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կարգապահական կանոնները, մրցույթների իրականացման կարգերը
- 2.8 Հաստատում է ուսումնական պլաները և ծրագրերը
- 2.9 Ընդունում է ինստիտուտի պատվավոր պրոֆեսորի, պատվավոր ամբիոնի վարիչի կոչումները շնորհելու որոշումներ:
- 2.10 Սահմանում է ֆակուլտետների ղեկանների, ամբիոնի վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգը և իրականացնում է այն:

### **3. Գիտական խորհրդի աշխատանքի կազմակերպման կարգը**

- 3.1 Գիտական խորհրդի աշխատանքները իրականացվում են համաձայն հաստատված ծրագրի, որը վաղօրոք քննարկվում և հաստատվում է գիտական խորհրդի նիստում
- 3.2 Գիտական խորհրդի գիտ.քարտուղարը նախապատրաստում է խորհրդի նիստի կազմակերպումը, ինչպես նաև խորհրդի որոշումների կատարման վերահսկողությունը:
- 3.3 Գիտական խորհրդի նիստը ձևակերպվում է արձանագրությամբ:
- 3.4 Արձանագրությունը ստորագրվում է նախագահի և քարտուղարի կողմից:
- 3.5 Խորհրդի նախագահը վերահսկում է որոշումների կատարումը և տեղեկացնում խորհրդի անդամներին որոշումների կատարման մասին:
4. ՀԲԻ-ի գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների գործունեություն

- 4.1 ՀԲԻ-ի գիտական խորհրդին կից գործում են մշտական հանձնաժողովներ, որոնց հիմնական նպատակն ու խնդիրներն են գիտական խորհրդի գործունեության անընդհատությունը ապահովելը և գործառույթների հիմնական գիտական, ուսումնական, մեթոդական, որակի ապահովման ուղղությունների մշակելը:
- 4.2 ՀԲԻ-ի գիտական խորհրդին կից ստեղծվում են հետևյալ հանձնաժողովներն, որոնց կազմերը ձևավոևվում են, որպես կանոն, գիտական խորհրդի անդամներից:
- Կանոնակարգային համակարգման և կառուցվածքային փոփոխությունների
  - Ուսումնամեթոդական
  - Կրթության որակի ապահովման և Բոլոնյան համակարգի ներդրման
  - Գիտական աստիճանների շնորհման, պարգևատրումների և պատվավոր կոչումների մրցույթային հարցերի
- 4.3 Հանձնաժողովների գործունեությունը իրականացվում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: